Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

351.74
4-29

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ՄԻԼԻՑԻԱՅԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1926

01 MAR 2010

351.74
Կ-29

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

1003
Յ 66

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ՄԻԼԻՑԻԱՅԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԴՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1926

18 .05. 2013

39.376

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպվար 463 բ· Պատվեր 3281· Տիրաժ 500

«Հաստատվում է»
Ներքգործժողկոմ՝ Հով. Դուրգերյան
«1» մարտի, 1926 թ. Երևան.

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Հրատարակվում է համաձայն ՀԽՍՀ ժողկոմխորհի 5 մարտի 1926 թ. վորոշման)

ԳԼՈՒԽ 1·

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1· Հ· Խ· Ս· Հ· յուրաքանչյուր քաղաքացի, վոր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի աշխատակցի կոչումն և ընդունել—դրանով իսկ պարտավորվում է Բանվորա-Գյուղացիական իշխանության առաջ պատվով կրել այդ կոչումը և խստիվ ու անշեղ պահել միլիցիոնական կարգապահությունը:

2· Հեղափոխական միլիցիոնական կարգապահությունն և ճշգրիտ կատարումն աշխատակիցների ծառայական այն կանոնների և վարք ու բարքի վերաբերյալ այն պարտականությունների, վորոնք որենքով ու կանոնադրություններով սահմանված են Բանվորա-Գյուղացիական միլիցիայում հետևյալ հիմունքներով —

ա) Հարգանք դեպի Հ. Խ. Ս. Հ., ինչպես և Խորհրդային Միության այլ հանրապետությունների օրենքները,

բ) Անձնվեր հավատարմություն Սոցիալիստական հայրենիքին և Խորհրդային Իշխանության ու իր տված հանդիսավոր խոստման,

գ) Գիտակցություն իր կամքը օրենքի հրահանգներին և պետերի հրամաններին յենթարկելու անհրաժեշտության,

դ) Բոլոր աշխատակիցների փոխադարձ հարգանքը, միաբանությունն ու ընկերականությունը,

ե) Դասախարակումն իր և ուրիշների մեջ այնպիսի հատկությունների և ընդունակությունների, որոնք անհրաժեշտ են իրենց պարտականության անրիծ ու ինքնագործոն կատարման համար:

3. Միլիցիական կարգապահությունը պարտավորեցնում է—ա) կատարել օրենքի բոլոր պահանջները, բ) ճշտությամբ գործադրել պետերի պաշտոնական հրամանները, գ) բարեխիղճ ու գիտակցաբար կատարել ծառայական պարտականությունները, դ) հակազդել յենթակա աշխատակիցների գանցաուությունների և ե) իր և ուրիշների մեջ զարգացնել ու պահպանել ռազմական վոգին ու հեղափոխական պատվազգացությունը:

4. Ռազմական վոգին արտահայտվում է մինչև վերանգներն արհամարելը հասնող արիության ու քաջության, անձնվիրության, դեպի իր անձն ու իր ուժերը ունեցած հավատի, պահանջված դեպքում ցույց տրված նախաձեռնության, դիմացկունության և ամեն պարագաներում անտրտունջ կերպով աշխատանքներ ու զրկանքներ տանելու մեջ:

5. Հեղափոխական պատվազգացությունը խղճի մտոք իր պարտականությունը կատարող միլիցիոներ—քաղաքացու սեփական արժանապատվության գիտակցությունն է:

Հեղափոխական պատվազգացությունը պարտավորեցնում է աշխատակցին՝ պահել իրեն արժանավայել ինչպես ծառայության ժամանակ, նույնպես և ծառայությունից դուրս. պաշտպանել քաղաքացիների իրավունքները և լինել նրանց հետ քաղաքավարի ու պատրաստակամ. լինել ազնիվ, անշահախնդիր, ամենայն բարեխիղճությամբ կատարել ծառայության պարտականությունները և խնայողաբար վերաբերվել դեպի պետական գույքը, որպես ժողովրդական սեփականություն:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻԼԻՑԻԱԿԱՆ ՊԵՏԵՐԻ ՅԵՎ ՅԵՆԹԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Բանվորա-Գյուղացիական կարմիր միլիցիայի բոլոր աշխատակիցները իրենց պաշտոնական պարտա-

կանութիւնները կատարելիս կարող են լինել մեկը մյուսների վերաբերմամբ պետ ու յենթարկյալ։

7. Բանվորա-Գյուղացիական կարմիր միլիցիայի այն աշխատակիցը, վորը օրենքով կամ կարգադրությամբ՝ միշտ կամ ժամանակավորապես՝ դեկավարում է այլ աշխատակիցների գործունեությունը և օրենքով վորոշված դեպքերում պատասխանատու է նրանց՝ համար,—կոչվում է նրանց Պետը, իսկ նրանք՝ նրա յենթարկյալները։

8. Պետը իր յենթարկյալների համար օրինակ պիտի հանդիսանա թե վարք ու բարքով և թե ծառայությամբ. նա պիտի լինի խելացի կերպով պահանջկոտ ու տակուն, բայց և միաժամանակ արդար, մատչելի, հավասարակշիռ, հանդիսա ու քաղաքավարի, պիտի ուսումնասիրի իր յենթարկյալներից ամեն մեկին, ամեն միջոց պիտի գործադրի նրանց կարիքները բավարարելու, պիտի ողնի խորհուրդներով ու ցուցմունքներով և խրատով պիտի պաշտպանի նրանց քաղաքացիական ու միլիցիական իրավունքները։ Պետը իր բոլոր գործողություններով պիտի ներշնչի յենթարկյալներին անկեղծ հավատարմություն ու անձնվիրություն Հ. Խ. Ս. Հ. և ընդհանրապես Խորհրդային Իշխանության։

9. Պետը իրավունք ունի հրամայել յենթարկյալներին, ձեռնարկել խրախուսանքի միջոցներ և դանցառությունների համար պատժել նրանց։

ԳԼՈՒԽ·3·

ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԻ ՄԱՍԻՆ

10. Պետի հրամանը լինելու է ճիշտ, պարզ և բոլոր կարելվույն կարճ։ Պետը հրաման տալիս, յենթարկյալին հարց ու փորձ անելով, պիտի համոզվի, վոր նա լրջոք հասկացել է հրամանի եությունը։

11. Պետը կարող է տալ յենթարկյալներին միայն պաշտոնական բնույթ կրող հրաման, այսինքն այն իրավունքներին ու պարտականություններին վերաբերող, վորոնք օրենքներով ու կարգադրություններով սահմանված են Բանվորա-գյուղացիական կարմիր միլիցիայի աշխատակիցների համար։

12. Պետը պարտական է պահանջել իր յենթարկյալներից, վոր նրանք ճշտությամբ կատարեն տրված հրամանը և օրենքով թույլատրված բոլոր միջոցներով ստիպել նրանց այդ հրամանը կատարել։

13. Եթե յենթարկյալը չի կատարում իր պետի հրամանը ռազմական պայմաններում կամ թե չե ուժով կամ զինված դիմադրություն և ցույց տալիս պետի հրամանի կատարման, յերբ պետը գտնվում է պաշտոնական պարտականությունների մեջ՝ վերջինս պարտավոր է հարկադրել յենթարկյալին կատարել իր հրամանը՝ զենքի գործադրության միջոցով։

Այս դեպքերում՝ հիշյալ բացառիկ միջոցի հետևանքների համար պետը յենթակա չէ պատասխանա-

ությունն, երբ այդ բացառիկ միջոցները գործադրվել են իրական կարևորության սահմաններում։

14. Պետք, որ դիմել է դենքի գործադրության, պարտավոր է անհապաղ կամ առաջին հնարավորության դեպքում հաղորդել այդ մասին իր անմիջական պետին, որը անկախ վերոհիշյալ ծայրագույն միջոցի գործադրության արդյունքից, պիտի կարգադրի քննություն կատարել տվյալ դեպքի մասին։

15. Յենթարկյալը պարտական է անհապաղ ու ճիշտ կատարել պետի օրինական հրամանները։

16. Եթե յենթարկյալին, որ հրաման է ստացել իր պետերից մեկից, տրվի նոր հրաման այլ պետի կողմից, յենթարկյալը պարտավոր է զեկուցել վերջինիս իր նախապես ստացած հրամանի մասին և վարվել այնպես, ինչպես որ կհրամայի հրամանը տվողը։

Այն պետը, որ փոխել կամ վերացրել է բարձրագույր պետի հրամանը, պարտական է անմիջապես զեկուցել նրան այդ մասին։

17. Յենթարկյալը չպիտի կատարի այն հրամանը, որը նրանից պահանջում է հանցանք գործել։

Ստանալով այդպիսի հրաման, յենթարկյալը առանց այն կատարելու՝ պարտավոր է անհապաղ զեկուցել այդ մասին յենթարկման կարգով բարձրագույր պետին, կամ իր կոմիսարին, կամ Արտակարգ Հանձնաժողովի որդաններին, կամ դատախազական հսկողության որդանին,

կամ որանց բացակայության դեպքում՝ հայտնել մոտակա գործկոմի նախագահին կամ անդամներից մեկին։

ա) Յենթարկյալի ի կատարումն իր պետի հրամանի գործած հանցանքի համար, պետը յենթարկվում է տվյալ հանցագործության համար որոշված բարձրագույն պատժին։

բ) Ի կատարումն պետի հրամանի հանցանք գործող յենթարկյալը կրում է տվյալ հանցանքի համար սահմանված պատիժը։

ԳԼՈՒԽ 4.

ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18. Խրախույսի միջոցները գործադրում է պետը պարգևատրելու համար այն յենթարկյալներին, որոնք աչքի յեն ընկել իրենց ծառայական պարտականությունները կատարելիս, կամ լավ վարք ու բարքի, յեռանդի ու ծառայության տեղյակ լինելու համար՝ համաձայն միլիցիայի պաշտոնավարական կանոնների։

ԳԼՈՒԽ 5.

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ

19. Յենթարկյալի կատարած զանցառության համար պետը պարտավոր է կարգապահական պատժի յենթարկել նրան։

20. Միլիցիական կարգապահության զանցառությունն է համարվում օրենքով և կանոնադրություններ-

բով սահմանված պարտականությունների խախտումը միլիցիայի աշխատակիցների կողմից կամ անբարեխիղճ, անուշադիր ու անվայել վերաբերմունքը դեպի պաշտոնը, յեթե միայն դա չունի քրեական պատժելի արարքի նշաններ:

21. Բանվորա-Գյուղացիական կարմիր Միլիցիայի աշխատակիցների վերաբերմամբ՝ նրանց գանցառությունների համար կարող են գործադրվել հետևյալ կարգապահական պատիժները.

ա) Նկատողություն, նախազգուշացումն՝ բանավոր կամ հրամանագրով:

բ) Հանդիմանություն՝ բանավոր, ասաջադրությամբ կամ հրամանագրով:

գ) Ծառայությունից ազատ ժամերին վոչ ավելի, քան յերկու շաբաթ ժամանակով, ազատ շարձակել զորանոցային շենքից: Այս պատժին յենթարկվում են այն աշխատակիցները, վորոնք որենքով, կանոնագրություններով կամ պետերի կարգադրությունների համաձայն պարտական են ապրել զորանոցներում:

դ) Պաշտոնում բարձրանալու իրավունքից և պաշտոնական պարգևատրություններից ու մրցանակներից զրկել 4–8 ամիս ժամանակով:

դ) Կալանք մինչև 30 որ:

զ) Փոխադրել հետևյալ ցածր պաշտոնին:

22. Բանվորա-Գյուղացիական կարմիր Միլիցիայի գանցառու աշխատակիցների հանդեպ կարգապահական պատիժներ սահմանելու իրավունքը պատկանում է հետևյալ պետերին՝

ա) Հանրապետության Միլիցիայի Պետին և նրա ոգնականին,

բ) Գավառի ու քաղաքի միլիցիայի պետին և նրա ոգնականին,

գ) Գավառամասի և քաղաքամասի միլիցիայի պետերի և նրանց ոգնականներին,

դ) Ավագ միլիցիոներներին:

Պատժելու իշխանություն ունին նաև Բանվորա-Գյուղացիական կարմիր Միլիցիայի մասերում, վարչություններում և հիմնարկություններում համապատասխան հրամանատարական պաշտոններ վարող այլ պետերը:

23. Վերոհիշյալ պետերն ունին հետևյալ իրավունքները՝

ա) Ավագ միլիցիոները՝ բանավոր նկատողության, նախազգուշացման ու հանդիմանության:

բ) Գավառամասի և քաղաքամասի միլիցիայի պետերը ու նրանց ոգնականները՝

1. զորանոցային շենքից շարձակել մինչ 5 որ,

2. կալանել մինչև 5 որ:

դ) Քաղաքի ու գավառի միլիցիայի պետն ու իր ոգնականը՝

1. հանդիմանել ու առաջադրություններ անել նաև հրամանագրով,

2. չարձակել զորանոցային չենքերից մինչև յերկու շաբաթ,

3. կալանել մինչև 15 օր,

4. պաշտոնի բարձրացման և պարգևատրության ու մրցանակի իրավունքից զրկել,

5. փոխադրել հետևյալ ցածր պաշտոնին:

դ) Հանրապետության Միլիցիայի պետը և նրա ոգնականը ոգտվում են կարգապահական բոլոր այն պատիժների իրավունքներով, վորոնք ներկա կանոնադրությամբ սահմանված են Բանվորա-Գյուղացիական կարմիր Միլիցիայի յենթարկյալ պաշտոնների համար:

24. Կարգապահական պատժահարության խնդրում բարձրագիր պետերը ոգտվում են նաև ստորագիր պետերին վերապահված իրավունքներով:

25. Պետը պատիժ սահմանելիս, նրա տեսակն ու չափը վորոշելիս՝ պետք է հաշվի առնի յենթարկյալների հանցավորության աստիճանը, զանցառության պարագաները, նրանց ծառայության տևողությունը, անցյալ վարքն ու բարքը, նրանց կրթության և ընդհանուր զարգացման աստիճանը, այլ և առողջապահական դրությունը, նամանավանդ զանցառությունը կատարելիս:

Ծանոթություն.—Միլիցիայի աշխատակիցը, վոր իր պաշտոնից ազատ ժամանակ հասարակական վայրերում կգտնվի հարբած վիճակում, կարգապահական կանոնադրության համաձայն կ'ենթարկվի մինչև 30 որվա կալանքի կամ կվոխադրվի ավելի ցած պաշտոնի: Իսկ յերբ հարբած վիճակում լինի պաշտոնը կատարելիս, կ'ենթարկվի պատասխանատվության ըստ Քրեական Որենսգրքի 109-րդ հոդվածի:

26. Հետևյալ ցածր աստիճանի պաշտոնի փոխադրելուց առաջ անպայման պետք է քննություն կատարվի:

27. Միևնույն զանցառության համար պետը կարող է միայն մի պատիժ տալ զանցառուին:

28. Յերբ պետը գտնի, թե իրեն վերապահված կարգապահական պատժահարության իրավունքը այս կամ այն յենթարկյալի վերաբերմամբ անբավարար է, պիտի դիմե ըստ հրամանատարության ավելի բարձր պետին, խնդրելով նշանակել զանցառության բնույթին համապատասխան պատիժ:

29. Բարձրաստիճան պետերը իրավատու չեն վերացնելու ստորագիր պետերի վորոշած պատիժները, սակայն, սխալմամբ նշանակված պատիժը կարող է վերացնել բարձրագիր պետը՝ յենթարկյալի դանգատի կամ սխալ պատիժ նշանակող պետի դիմումի հիման վրա:

30· Զանցառու յենթարկյալի պաշտոնի բարձրացման, այլ և պարգևատվության ու մրցանակների իրավունքից զրկելու ժամանակը կարելի չէ կրճատել և նույն իսկ խոպան վերացնել, յերբ զանցառուն հայտնաբերի լավ վարք ու բարք կամ հերոսություն կատարի:

Այդ պատժի ժամանակի կրճատման կամ նրա վերացման իրավունքը պատկանում է ըստ հրամանատարության բարձրագույր պետին՝ պատիժը նշանակող պետի դիմումի համաձայն:

31· Յենթարկյալների կատարած զանցառությունների և նրանց համար նշանակված պատիժների մասին հայտարարվում է միավորման (կամ խմբակի) արվող հրամանագրում՝ բացառությամբ բանավոր նկատողությունների ու հանդիմանությունների և պատժահարությունների մատյանն է գրանցվում, նշանակելով զանցառության տեսակը, պատժի տեսակն ու չափը, պատժահարության նշանակման ու գործադրության ժամանակը:

32· Զանցառու յենթարկյալի համար նշանակված պատիժը գործադրվում է անմիջապես, յեթե դրան վոչ արգելք չլինի:

33· Վաղեմության պատճառով պատիժը չի կիրառվում՝

ա) Յերբ կատարված զանցառությունը կամ զանցառու յենթարկյալը չեն հայտնաբերված զանցառություններ կատարված որից 3 ամսվա ընթացքում,

բ) Յեթե զանցառության համար յենթարկյալին նշանակված պատիժը չի գործադրված յերեք ամսվա ընթացքում այն որվանից, յերբ հրամանագրում հայտարարված է պատիժ նշանակելու մասին:

ԳԼՈՒԽ 6·

ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

34· Բանվորա-գյուղացիական կարմիր Միլիցիայի աշխատակիցները կարող են գանգատ ներկայացնել պետերի իրենց հանդեպ ցույց տված ապօրինի ու անարդար գործողությունների կամ կարգադրությունների համար: Ուրիշների փոխարեն գանգատ ներկայացնելն արգելվում է:

35· Զի թույլատրվում գանգատվել պատժի խստության դեմ, յերբ այդ պատիժը նշանակող պետը դուրս չի յելել օրենքով իրեն վերապահված իշխանության սահմաններից:

36· Գանգատը ներկայացվում է անմիջապես այն պետին, վորին յենթարկվում է գանգատի առիթ տվող պետը, միաժամանակ զեկուցելով ըստ խմբակի:

37· Գանգատը կարելի չէ ներկայացնել վոչ ուշ, քան 5 որ անց այն որից, յերբ Բանվորա-Գյուղացիա-

կան միլիցիայի աշխատակիցն իմացել է իր իրավունքների խախտումը։ Յեթե վերոհիշյալ 5 օրվա ընթացքում անկարելի է եղել գանգատ ներկայացնել հիվանդության, գործուղման կամ պաշտոնական հանգամանքներով և կամ այլ, գանգատավորից անկախ պատճառներով, գանգատը տրվում է յերեք օրվա ընթացքում՝ գանգատը ժամանակին ներկայացնելուն արգելք հանդիսացող հանգամանքների վերանալուց հետո։ Հիշյալ ժամկետներից հետո ներկայացված գանգատը քննության չի առնվում։

38· Արգելվում է գանգատ տալ վարժական պարապմունքների, պաշտոնական պատվերների և ընդհանրապես պաշտոնավարության ժամանակ։

39· Գանգատները կարող են ներկայացվել բանավոր կամ գրավոր։ Գանգատավորի կողմից չստորագրված գրավոր գանգատները (անանուն) թողնվում են առանց քննության։

Բոլոր գանգատները գրանցվում են վարչության կամ խմբակի մեջ յեղած գանգատի գրքում։

40· Գանգատը ստացող պետը պարտական է վոչ ուշ, քան հետևյալ օրը ձեռնարկել գանգատի և գանգատի առիթ տվող հանգամանքների քննության։ Քննությունը, նայած գանգատի բովանդակության, հանգամանքների բարդության, գանգատը ստացող պետի պաշտոնական դիրքի՝ կատարվում է կամ անձամբ պետի միջոցով կամ

նրա հանձնարարությամբ՝ յենթակայներից մեկի միջոցով, ըստ վորում քննությունը չի կարող հանձնարարվել այնպիսի անձի, վոր յենթարկվում է գանգատավորին կամ այն պետին, վորի դեմ ներկայացված է գանգատը։

41· Գանգատը ստացող պետը պետք է նրա լուծումը տա վոչ ուշ, քան գանգատը ստանալուց հետո յերեք օրվա ընթացքում, բացի այն առանձնապես բարդ դեպքերից, վորոնք պահանջում են յերկարատև քննություն։

42· Յեթե գանգատավորը յերկու շաբաթվա ընթացքում իր գանգատի վերաբերմամբ չստանա վոչ մի տեղեկություն կամ լուծում, կարող է գանգատ ներկայացնել յենթարկման կարգով հետևյալ պետին։

L003
13668

43· Այն գանգատները, վորոնք հետևանք են գանգատավորի իր իրավունքների, գործող օրենքների, կամ կանոնադրությունների, կամ պետի կարգադրությունների անգիտության ու անհասկացողության, հայտարարվում են անհիմն և այդ գանգատի առթիվ վորոշում կայացնող պետը պարտական է բացատրել գանգատավորին նրա սխալն ու մոլորությունը։

44· Այն գանգատը, վորի մեջ գանգատավորը բանավոր կամ գրավոր մատնանշում է այնպիսի հանգամանքներ, վորոնք նրա համար ակնհայտի կերպով տեղի չեն ունեցել, կամ մեղադրում է պետին այնպիսի գործողությունների մեջ, վորոնք ակնհայտնի կերպով տեղի չեն ունեցել, համարվում է սուտ։

Այդպիսի գանգատի համար մեղավորը պատասխանատվության է յենթարկվում՝ համաձայն Քրեական Որենսգրքի 177 և 179 հոդվածների։

45. Յեթե գանգատը հիմնավոր է ճանաչվում, գանգատն ընդունող պետը պարտական է անմիջապես կարգադրել վերականգնել գանգատավորի խախտված իրավունքը, իսկ յեթե այդ կարգադրությունը դուրս է նրան վերապահված իշխանության սահմաններից, պարտական է խնդրել պատշաճ կարգադրություն համապատասխան բարձրագույր պետից։

46. Պետի սահմանած պատժի վրա գանգատ ներկայացնելը չի կասեցնում պատժի գործադրությունը։

47. Յեթե գանգատի հիմք ծառայող պարագաների քննությունից հետո գանգատը հիմնավոր ճանաչվի, այն պետը, որի վրա տրված է գանգատը, յենթարկվում է կարգապահական պատասխանատվության կամ պատժի՝ համաձայն Քրեական Որենսգրքի 105 հոդ., յեթե նրա գործողության մեջ չկան ավելի ծանր հանցագործության նշաններ։ Յեթե նկատվեն այդպիսի նշաններ, պետը յենթարկվում է պատասխանատվության՝ համաձայն Քրեական Որենսգրքի համապատասխան հոդվածների։

Վարչական վարչության պետ՝ Ա. ԲԵՐԲԵՐՅԱՆ

Միլիցիայի տեսուչ՝ Խ. ԻԳԻԹԽԱՆՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0206730

39376